# Շ

*ՇԵԽԻՉԱՆ (ԽՕՃԱ) ԲԱՂԻՇԵՑԻ.— Որդի խօճա Թումաջանին։ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Երուսաղէմ և Ռէճ (1700) կարմիր Ս. Յակոբի պարտքին ի հաշիւ կը վճարէ և մասամբ մը կ'ազատէ գրաւի դրուած անօթները. Մշ. Թ. 94 Յանախապատուին մէջ կը հանդիպինք իր մասին հետևեալ անթուական յիշատակարանին։ «Դարձեալ յիշեցէք ի Քս. ով պատահողք յայսմ տառի զԲաղիշեցի խաւջայ Թումաջանի որդին զբարիվայելուչ պատանին զխոջա Շեխիչանն որ եկն ի սուրբ քաղաքն Եմ. յերկրպագութիւն սուրբ Փերեզմանին Քի. և այլ տնօրինականացն և զի պարտքն բազմացեալ էր ի վերայ Ս. Յակոբայ առաքելական աթոռոյս, անօթք և սպասք սուրբ եկեղեցւոյս գրաւ են ի տունս այլազգեաց։ Խոջա Շէխիչանն ետ Ռ. և Էճ կարմիր ի պարտքն և սակաւ մի ի գրաւ անօթիցն ազատեաց...» (Խաչ. Ցուց)։*

*ՇՄԱԻՈՆ ՎՐԴ. ՇԱՄԲԵՑԻ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1701ին։ Մշ. Թ. 23 Վարք Հարանց ձեռագրին մէջ նոյն թուականին կը գրէ հետևեալ յիշատակարանը. «Ես Շմաւոն Շամբեցի ի գիւղաքաղաքէն որ Արարք կոչի. եմ վրդ. ծառայ Քս. Յիսուսի. ու պաշտօնեայ Նախավկայի եկա Ս. Երուսաղէմ ՌճԾ (=1701) աւելի երկու ամ սընեալ լինի, ի Փետրուար ամիս կոչի ի մուտն ի Ռամլա մտանի. Ազովտաս քաղաք կոչի. ի հոգետուն վանք անուանի, սուրբ Գէորգ զօրավարի։ Ժ. օր նստանք այս նահանգի, ելեալ դիմեցաք ի սուրբ քաղաքն Երուսաղէմի... որ ի գրոց Էմաուս կոչի։ Զար արապներ վրայ եկին, չատոց ըզգակն ի բաց առին և զիմ մալն ամէն առին, լալոտ աչօք և զիս թողին. ելեալ ի սուրբ Երուսաղէմ հասի. պատմեմ զայս բանս բազում չատ է, այլ ես ծայրաքաղ գրեցի։ Աստուած հոգին լուսաւորէ բազմաչխատ վէքիլ պապային, որ զիս չթող անտես չարին և զիմ ուխտն կատարեցի. յետոյ եկայ յայս սուրբ վանքս ժամանակ մի մնացի»։ (Խաչ. Ցուց.)։*